ՎԻՔԻՊԵԴԻԱ
Ազատ հանրագիտարան

# Խոռ Հայկազունի

Վիքիպեդիայից՝ ազատ հանրագիտարանից

| Խոռ Հայկազունի<br>Խոռ Հայկազն[1][2] | |
|---|---|
| Խորխոռունիների նահապետ | |
| Ազգություն | հայ |
| Դինաստիա | Հայկազունիներ |
| Հայր | Հայկ Նահապետ |

**Խոռ Հայկազունի** նաև **Խոր** (ծննդյան և մահվան թվականներն անհայտ), Հայկ նահապետի որդին, Խորխոռունիների նախարարական տան հիմնադիրը[2][3][4][5][6]: Ըստ Մովսես Խորենացու Արամանյակը՝ Խոռի եղբայրը, նրան և նրանց մյուս եղբորը՝ Մանավազին և նրա որդիներին՝ Բազին և Որդունիին, իրենց ամբողջ ընտանիքով թողնում է Հարքում: Խոռը հաստատվում է Վանա լճի հյուսիսում, իսկ այդ գավառը նրա հիմնադրած տոհմի անունով շատ հաճախ կոչվում է Խորխոռունիք[3]: Ըստ Վարդան Արևելցու Խոռն է կառուցել Խոժոռնին և Խորակերտը[7]:

## Ծանոթագրություններ

1. «Հայոց Պատմություն», Մովսես Խորենացի, 1961, Երևան, Գլուխ Բ. է
2. «Հայոց անձնանունների բառարան», Հրաչեայ Աճառեան, Երեւան, 1942, Հատոր 2, Ցուցակ 1, էջ 528
3. «Հայոց Պատմություն», Մովսես Խորենացի, 1961, Երևան, Գլուխ Ա. ժբ
4. «Հայոց պատմություն», Ուխտանես, Ա. ժզ
5. «Ազգաբանութիւն Հայոց», Մինաս Ամդեցի, էջ 3
6. «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Սամուել Անեցի, էջ 42
7. «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 90

## Աղբյուրներ

- «Հայոց անձնանունների բառարան», Հրաչեայ Աճառեան, Երեւան, 1942, Հատոր 2, Ցուցակ 1, էջ 528
- «Հայոց Պատմություն», Մովսես Խորենացի, 1961, Երևան, Գլուխ Ա. ժբ, Բ. է
- «Հայոց պատմություն», Ուխտանես, Ա. ժզ
- «Ազգաբանութիւն Հայոց», Մինաս Ամդեցի, էջ 3
- «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Սամուել Անեցի, էջ 42, 48
- «Տիեզերական պատմություն», Ստեփանոս Ասողիկ, Ա. ե
- «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 90

Ստացված է «https://hy.wikipedia.org/w/index.php?title=Խոռ_Հայկազունի&oldid=7795320» էջից